Արձանագրություն 4

«Բերդի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար

ԲՀՄ-ԳՀԱՊՁԲ-19/2 ծածկագրով սննդամթերքի ձեռքբերման համար գնանշման հարցման ձևով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 26.02.2019թ. ժամը 15:00-ին

Նիստին մասնակցում էին՝

**Նախագահ՝**

Ա. Ծատուրյան հաշվապահ

**Հանձնաժողովի անդամներ՝ ԳՊ/ԳԱ գնահատող աշխատակազմ**

Թ. Գևորգյան տնտեսվար

Ա. Դալլաքյան խոհարար

**Քարտուղար՝**

Գ. Ղարաբաղցյան գնումների համակարգող

Օրակարգ

1. Ընթացակարգի հաղթող ճանաչված մասնակիցների մասին

1.1 Հաշվի առնելով, որ ԲՀՄ-ԳՀԱՊՁԲ-19/2 ծածկագրով ընթացակարգի 1, 2, 3, 4, 5, 6, 8, 9, 10, 11, 12, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 22, 23, 24, 25, 26, 27, 28, 29, 30, 31-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած Նորայր Առուշանյան Ա/Ձ-ի, 7-րդ, 13-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած §Պիրամիդա Կվինտ¦ ՍՊԸ-ի, իսկ 21-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած §Յուրգաս¦ ՍՊԸ-ի հարկային պարտավորությունների ստուգման համար ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե կատարված հարցմանը երեք աշխատանքային օրվա ընթացքում ստացել է պատասխան, այն է՝ Նորայր Առուշանյան Ա/Ձ-ի և §Պիրամիդա Կվինտ¦ ՍՊԸ-ի ֆինանսական միջոցները համապատասխանում են հրավերի պահանջներին: Նորայր Առուշանյան Ա/Ձ-ն և §Պիրամիդա Կվինտ¦ ՍՊԸ-ն սահմանված կարգով ներկայացրել են հրավերով պահանջված որակավորման չափորոշիչները հիմնավորող փաստաթղթերը և որոնք համապատասխանում են հրավերի պահանջներին: §Յուրգաս¦ ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 16.000 (տասնվեց հազար) ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություն: <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն գնումների ընթացակարգին մասնակցության իրավունք չունեն այն

մասնակիցները, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ: Քանի որ §Յուրգաս¦ ՍՊԸ-ի ժամկետանց հարկային պարտավորությունը /16.000 ՀՀ դրամ/ գերազանցում է իր ներկայացրած գնային առաջարկի 1 տոկոսը /15526.4 ՀՀ դրամ/, ուստի գնահատող հանձնաժողովը <<Գնումների մասին>> ՀՀ օրենսդրության պահանջներին համաձայն **որոշեց.**

ա/ ԲՀՄ-ԳՀԱՊՁԲ-19/2 ծածկագրով ընթացակարգի 1, 2, 3, 4, 5, 6, 8, 9, 10, 11, 12, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 22, 23, 24, 25, 26, 27, 28, 29, 30, 31-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է համարվում Նորայր Առուշանյան Ա/Ձ-ն, որին սահմանված կարգով կառաջարկվի կնքել համապատասխան պայմանագիր: 7-րդ և 13-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է համարվում §Պիրամիդա Կվինտ¦ ՍՊԸ-ն, որին սահմանված կարգով կառաջարկվի կնքել համապատասխան պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

բ/ Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված <<գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 44-րդ կետով՝ որոշեց մերժել §Յուրգաս¦ ՍՊԸ-ի հայտը 21-րդ չափաբաժնի մասով և <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ նշված չափաբաժնի մասով գնման ընթացակարգը համարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա. Ծատուրյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Թ. Գևորգյան

_____ Ա. Դալլաքյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Գ. Ղարաբաղցյան